**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի մարտի 27-ի N 2 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/47**

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/47 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Գնման ընթացակարգի հրավերում անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու:

**Փոփոխության նկարագրություն:** Տեխնիկական բնութագրերը անհրաժեշտ է շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ կերպ՝

1-ին չափաբաժին՝ «Մեծամոր համայնքի Բամբակաշատ բնակավայրի մշակույթի տան ներքին կահավորում և հարակից բակի բարեկարգում: Տարածքը՝ 1500,0 քմ:

Նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները

1. Մշակույթի տան դահլիճի, բեմի և օժանդակ տարածքների կահավորում անհրաժեշտ կահույքով և սարքավորումներով:

2. Կանաչապատ տարածքի ստեղծում, բարեկարգում:

3. Համապատասխան ոռոգման ցանցի կառուցում:

4. Ճեմուղիների կառուցում՝ սալիկներով:

5. Ապահովել այգում ճեմուղիների լուսավորությունն էլեկտրասյուներով և էներգախնայող LED լուսատուներով, ինչպես նաև ստեղծել գեղագիտական լուսավորություն:

6. Նստարանների և աղբամանների տեղադրում, քանակը և տեսակը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

- ✓ Տոպոգրաֆիական հանույթի տրամադրում:
- ✓ Ինժիներերկրաբանական հետազոտության իրականացում և տրամադրում:
- ✓ Տարածքի չափագրում
- ✓ " Ուսումնասիրության արդյունքում նախնական քննարկում համայնքի ղեկավարի հետ
- ✓ " Աշխատանքային ծավալների կազմում
- ✓ " Նախահաշիվային փաստաթղթերի կազմում
- ✓ " Աշխատանքային նախագիծը իրականացնել նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համաձայն
- ✓ " Նախատեսել նախագծի համաձայնեցումը շահագրգիռ մարմինների և ինժեներական ենթակառուցվածքների մատակատակարար կազմակերպությունների հետ (ջրամատակարարում, գազամատակարարում, էլեկտրամակարարում)
- ✓ " Նախագիծը ներկայացնել ամբողջական 4 օրինակ տպված և էլ կրիչով:

Վճարումը կիրականացվի պատվիրատու ընկերության հետ համաձայնեցումից և փորձաքննության դրական եզրակացությունից հետո:»:

2-րդ չափաբաժին՝ «Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի հանրային այգու բարեկարգում՝ գետնային շատրվանային համակարգի ներդրմամբ: Տարածքը՝ 200,0 քմ:

Նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները

- ✓ "Այգու կենտրոնական քայլուղու երկայնքով ներկառուցվող գետնային շատրվանների (dry fountain) տեղադրում՝ ժամանակակից լուսային և ջրային լուծումներով:

✓ "Համապատասխան ոռոգման ցանցի վերանորոգում կամ փոխարինում: Անհրաժեշտության դեպքում ջրահեռացման համակարգի կառուցում:
✓ "Շատրվանի կառուցման համար առաջարկությունների ներկայացնում և համաձայնեցում պատվիրատուի հետ:
✓ "Շատրվանի կից տարածքի բարեկարգում սալիկներով:
✓ "Ապահովել շատրվանի տարածքի լուսավորություն էներգախնայող LED լուսատուներով:
✓ Շատրվանի գունավոր LED լուսավորություն՝ երեկոյան ժամերին
✓ "Շատրվանի ավտոմատ կառավարման համակարգ (ժամային և սեզոնային):
✓ "Տոպոգրաֆիական հանույթի տրամադրում:
✓ "Ինժեներերկրաբանական հետազոտության իրականացում և տրամադրում:
✓ "Ուսումնասիրության արդյունքում նախնական քննարկում համայնքի ներկայացուցիչների հետ
✓ "Աշխատանքային ծավալների կազմում
✓ "Նախահաշվային փաստաթղթերի կազմում
✓ "Աշխատանքային նախագիծը իրականացնել նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համաձայն
✓ "Նախատեսել նախագծի համաձայնեցումը շահագրգիռ մարմինների և ինժեներական ենթակառուցվածքների մատակատակարար կազմակերպությունների հետ (ջրամատակարարում, գազամատակարարում, էլեկտրամակարարում)
✓ "Ներկայացնել 3D պատկեր և էսքիզ
✓ "Նախագիծը ներկայացնել ամբողջական 4 օրինակ տպված և էլ կրիչով

Վճարումը կիրականացվի պատվիրատու ընկերության հետ համաձայնեցումից և փորձաքննության դրական եզրակացությունից հետո:»:

3-րդ չափաբաժին՝ «Մեծամոր համայնքի Տանձուտ բնակավայրի կանաչ համայնք և բարեկարգում: Բարեկարգման ենթակա տարածքը կազմելու է մինչև 2000 քմ:

Նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Տարածքի սահմանազատում:
2. Կանաչապատ տարածքի ստեղծում, բարեկարգում: Համապատասխան ոռոգման ցանցի կառուցում:
3. Տեղական կլիմային համապատասխան բուսատեսակների օգտագործում, ստվեր ապահովող ծառատեսակների ներառում, դեկորատիվ և բազմամյա բույսերի կիրառություն, համաձայնեցնել պատվիրատուի հետ ըստ տարածքի պահանջի:
4. Ճեմուղիների կառուցում՝ սալիկներով:
5. Մարզագույքի տեղադրում
6.Ապահովել այգում ճեմուղիների լուսավորությունն էլեկտրասյուներով և էներգախնայող LED լուսատուներով:
7. Նստարանների և աղբամանների տեղադրում, քանակը և տեսակը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

✓ Տոպոգրաֆիական հանույթի տրամադրում:
✓ Ինժիներերկրաբանական հետազոտության իրականացում և տրամադրում:
✓ Տարածքի չափագրում
✓ Ուսումնասիրության արդյունքում նախնական քննարկում համայնքի ներկայացուցիչների հետ
✓ Աշխատանքային ծավալների կազմում
✓ Նախահաշվային փաստաթղթերի կազմում
✓ Աշխատանքային նախագիծը իրականացնել նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համաձայն
✓ Նախատեսել նախագծի համաձայնեցումը շահագրգիռ մարմինների և ինժեներական ենթակառուցվածքների մատակատակարար կազմակերպությունների հետ (ջրամատակարարում, գազամատակարարում, էլեկտրամակարարում)
✓ "Ներկայացնել 3D պատկեր և էսքիզ
✓ "Նախագիծը ներկայացնել ամբողջական 4 օրինակ տպված և էլ. կրիչով

Վճարումը կիրականացվի պատվիրատու ընկերության հետ համաձայնեցումից և փորձաքննության դրական եզրակացությունից հետո:»:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Վարդանյան:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 08)
Էլ. փոստ՝ v.vardanyan@promotion.am
Պատվիրատու՝ Մեծամորի համայնքապետարան